

## ՏՆՈՐՀՆԵՔ

ՕՐՀՆԵԱԼ ՏԵՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ. ԱՄԵՆ:  
ՀԱՅՐ ՄԵՐ...

### ՇԱՐԱԿԱՆ ԴԿ.

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որոիք մարդկան օրինեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ:

Ալելուիա օրթի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Երկիւղածութեամբ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Ղուկասու:

Փառք Քեզ Տէր Աստուած մեծ:

Պռօսխումէ:

Ասէ Աստուած:

«Եւ հովիւք էին ի տեղուցն յայնմիկ բացաւթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հաւտից իւրեանց: Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա. Եւ երկեան՝ երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. «Մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեն ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսաւր փրկիչ, որ է՝ աւծեալ Տէր. ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ գտանիցէք՝ մանուկ պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մսուր»: Եւ յանկարծակի եղեւ ընդ

հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զաւրաց երկնաւորաց, որ աւրինէին զԱստուած՝ եւ ասէին. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Եւ եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. «Եկայք, երթիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զինչ է բանս այս որ եղեւ. զոր Տէր եցոյց մեզ»: Եւ եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ զՅովսէփի, եւ զմանուկն եղեալ ի մսուր»:

## Քարոզ

Եւ եւս խաղաղութեան՝ զՏէր աղաչեսցուք:

Կասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ

ձայնի աղաչանաց մերոց՝ զՏէր աղաչեսցուք:

Կասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ

ամենազօր Աջոյն հւրոյ՝ զՏէր աղաչեսցուք:

Յաղագս հիւանդաց եւ ամենայն վշտացելոց  
փութապէս առողջութեան՝ զՏէր աղաչեսցուք:

Կասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս

Եւ առարինի վարս՝ զՏէր աղաչեսցուք:

Վասն հոգուցն հանգուցելոց, որք Ճմարիտ

Եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին՝ զՏէր աղաչեսցուք:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած, մեր ըստ մեծի ողորնութեան Քում. ասասցուք  
ամենեքեան միաբանութեամբ:

## ԱՌՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Արտասուաթոր հառաջմանը եւ լալագին պաղատանաւք, ըղձմանը  
հայցեմ եւ խնդրեմ՝ միջնորդ եւ բարեխաւս ունելով զՍուրբ Լուսաւորիչս  
ընդհանուր ամենայն սրբովք՝ առ ապենիազն Աստուած, որ առատն է ի տուրս  
բարեաց եւ աննախանձ ի պարգեւս, անքն եւ անոխն ի չարիս եւ բնաւին իսկ  
ներող ի զղացեալս, զի քաղցր ականք հայեաց ի յիւրականի բարձրութենէն, ի  
գոգեալ եւ ի յովտացեալ անձինս մեր եւ զուղիսս փափկութեան եռանդաշարժ  
աւրինութեան եւ ամենալիր բարութեան հեղցէ, գեղցէ եւ սփռեսցէ Ե ի վերայ  
ձեր՝ որպէս անձրեւ ի վերայ ձեր՝ որպէս անձրեւ ի վերայ սիզոյ եւ որպէս  
տարափ ի վերայ խոտոյ:

Այլ եւ դարձեալ աղաչեմ եւ աղաւթեմ ի վերայ ձեր եւ ընդ մեզ  
կցորդակից զամենայն սուրբս, զի ամենազաւր բազկաւն եւ ամենախնամ  
Աջովն հւրով պարսպեալ պահեսցէ զձեզ տամբ եւ զաւակաւք եւ ամենայն  
գոյիք անսասան կենաւք ի զարդ Եկեղեցւոյ եւ ի գեղ վայելչութեանս սուրբ  
անունն հւրոյ:

Հիւանդաց ձերոց առողջութիւն պարգեւեսցէ, գլորելոցն կանգ[ն]ումն  
տացէ, մոլորելոցն դարձ տացէ, վշտացելոցն մխիթարութիւն ընծայեսցէ,  
ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն արասցէ, իսկ կենդանեացդ՝ կեանք  
անցաւագին եւ ժամանակ անվրդովք: Հաւատք կենդանացեալ գործովք եւ  
գործք վերտառացեալ հաւատովք: Արգանդ ձեզ բազմաժինք եւ զաւակք  
շնորհընկալք, հայրասէրք եւ աստուածասէրք: Կանայք՝ համեստք եւ  
[աղ]աւթասէրք, այրասէրք եւ որդեսէրք, աստուածասէրք, երկիւղաձք,  
աղքատասէրք] եւ տնարարք:

Եւ ... Եկեսցէ, զետեղեսցի, զեղցի որպէս զգեստ աւրինութիւնք՝ լի ամբարութեամբք, զոր աղաւթեցաք ի վերայ ձեր, քանզի ասէ Գիրն, թէ՝ «Հաւատացելոյն ամենայն աշխարհ լի է ընչիւք, իսկ անհաւատին՝ Եւ ոչ դանգ մի» (Առակ. ժԷ 4):

Ո՞ղջ լերուք ի կամս հզաւրին Աստուծոյ իմոյ Յիսուսի. ամէն: